[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Մերիա	[3] Համար
4	Դեկտեմբեր	2018 թ.		Բ	1300078516
[4] Մատուցման ամսաթիվը					
4	Դեկտեմբեր	2018 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Մերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 3 5 3 8 1 1 2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[10] Անվանումը	«ՎԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ N 1570015111280200
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	3րդ միկ.շրջ. 23 18
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 5 0 6 6 3 4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին.նախ.աշխ.գործ.վարչ N 900011180081
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ Խորհրդարանի 6
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Լիազորագիր: Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N N/գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ծառայության ծավալը կամ ծավալանակը2 բրգանք	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Հայերենից պարսկերեն թարգմանություն Մոհամմադ Աբբասի Նոսրաթ. որոշման ամսաթիվ 20.11.2018թ	էջ	2	2900		5800
2	Անգլերենից հայերեն թարգմանություն Զաֆեր Թուրան, որոշման ամսաթիվ 21.11.2018թ	էջ	5	2450		12250
3	Հայերենից ռուսերեն թարգմանություն Շակիրրան Ուուլու, որոշման ամսաթիվ 21.11.2018թ	էջ	2	2300		4600
4	Հայերենից անգլերեն թարգմանություն և հակառակը Քեմալ Օքսուզ, որոշման ամսաթիվ 22.11.2018թ	ժամ	1.5	7000		10500
5	Հայերենից անգլերեն թարգմանություն Քեմալ Օքսուզ, որոշման ամսաթիվ 23.11.2018թ	էջ	7	2450		17150
6	Հայերենից գեոմաներեն թարգմանություն Արդոլոեգա Սաբերի, որոշման ամսաթիվ 23.11.2018թ	էջ	2	3655		7310
7	Հայերենից պարսկերեն թարգմանություն Ռուհոլլա Սախրոլդին, որոշման ամսաթիվ 27.11.2018թ	էջ	7	2900		20300
Ընդամենը						77910

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ STEPANYAN HMAYAK 2301850293

Ծառայություն (աշխատանք) ստացող՝ GRIGORYAN SUSANNA 7403690397

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«20» նոյեմբերի 2018թ. ք.Երևան

Ես, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Հ.Բաղալյանս, ուսումնասիրելով Իրանի Իսլամական Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող ՄՈՀԱՄՄԱԴ ԱԲԲԱՍԻ ՆՈՍՐԱԹԻԻ (ՆՈՍՐԱՏԻ, MOHAMMAD ABBAS NOSRATI) հայտնաբերման վերաբերյալ ստացված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2018 թվականի նոյեմբերի 1-ին՝ ժամը 23:35-ին, Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության ՊՊԾ գնդի 4-րդ հատուկ գումարտակի 1-ին վաշտի և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի ՔՀԲ ծառայողների հետ համատեղ ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժին բերման է ենթարկվել և ձերբակալվել Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) իրավասու մարմինների կողմից ԻԻՀ քրեական օրենսգրքի 674-րդ հոդվածի (վստահությունը չարաշահելը) հատկանիշներով նախատեսված հանցագործության կատարման համար միջազգային մակարդակով Ինտերպոլի «Կարմիր անկյունով» քարտի տեսքով հետախուզվող ՄՈՀԱՄՄԱԴ ԱԲԲԱՍԻ ՆՈՍՐԱԹԻՆ (ՆՈՍՐԱՏԻ, MOHAMMAD ABBAS NOSRATI, ծնված՝ 30. 12. 1993թ., ԻԻՀ քաղաքացի):

14.11.2018թ. ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել են Մ.Ա.ՆՈՍՐԱԹԻԻ հանձնման արարողակարգում անհրաժեշտ փաստաթղթերը:

20.11.2018թ. ՀՀ գլխավոր դատախազի կողմից որոշում է կայացվել Մ.Ա.ՆՈՍՐԱԹԻԻ հանձնման թույտվության վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազի 20.11.2018թ. կարգադրությամբ հանձնարարվել է ապահովել Մ.Ա.ՆՈՍՐԱԹԻԻ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքի իրացումը:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ Կրիստինա Խանիկյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ՄՈՀԱՄՄԱԴ ԱԲԲԱՍԻ ՆՈՍՐԱԹԻԻ (ՆՈՍՐԱՏԻ, MOHAMMAD ABBAS NOSRATI) հանձնման թույտվության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի որոշման պարսկերեն գրավոր հաստատված թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ

հրավիրել Կրիստինա Խանիկյանին (անձնագիր՝ AG0494708, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 06.07.2010թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազության
միջազգային-իրավական
համագործակցության վարչության
դատախազ **Հ.Բաղայան**

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ «20» 11 2018թ.

Կրիստինա Խանիկյան

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

21.11.2018թ. *ք.Երևան*

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Լ.Մանուկյանս, ուսումնասիրելով հետախուզվող ԶԱՖԵՐ ՔԱՍԻՄԻ ԹՈՒՐԱՆԻ վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունում ստացված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

30.10.2018թ. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունում ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ի միջոցով ստացվել են Թուրքիայի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող ԶԱՖԵՐ ՔԱՍԻՄԻ ԹՈՒՐԱՆԻ վերաբերյալ փաստաթղթերը:

13.11.2018թ. ստացվել է Զ.Ք. ԹՈՒՐԱՆԻ նկատմամբ հայտարարված Ինտերպոլի «Կարմիր անկյունով» քարտի պատճենը՝ անգլերեն լեզվով:

Առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478[2]-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը՝ հիշյալ հոդվածի համաձայն Զ.Ք. ԹՈՒՐԱՆԻ նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին միջնորդություն դատարան ներկայացնելու համար:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է՝ [...] ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով այն, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ինչպես նաև այն, որ Զ.Ք. ԹՈՒՐԱՆԸ չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ ԱՐՄԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով և 478.4-րդ հոդվածի 2-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Զ.Ք. ԹՈՒՐԱՆԻ նկատմամբ հայտարարված Ինտերպոլի «Կարմիր անկյունով» քարտի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ԱՐՄԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ (անձնագիր AG սերիայի №0334433, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 23.01.2015թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության
վարչության պետի տեղակալ *Լ. Մանուկյան*

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
ԱՐՄԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ *21.11.2018թ.*

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«21» նոյեմբերի 2018թ. ք.Երևան

Ես՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Հ.Բաղալյանս, ուսումնասիրելով Ղրղզստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող ՇԱԿԻՐԺԱՆ ՈՒՈՒԼՈՒ ԶՈԽԻԴԺԱՆԻՆ (ԶՈԽԻՋԱՆ, SHAKIRZHAN UULU ZOKHIDZHAN) Ղրղզստանի Հանրապետության իրավասու մարմնին հանձնելու վերաբերյալ ստացված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

19.11.2018թ. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում ստացվել է Ղրղզստանի Հանրապետության գլխավոր դատախազության գրությունը՝ ՇԱԿԻՐԺԱՆ ՈՒՈՒԼՈՒ ԶՈԽԻԴԺԱՆԻՆ (ԶՈԽԻՋԱՆ, SHAKIRZHAN UULU ZOKHIDZHAN) Հայաստանի Հանրապետությունից Ղրղզստանի Հանրապետություն տեղափոխելու մասին:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ Հմայակ Ստեփանյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ՇԱԿԻՐԺԱՆ ՈՒՈՒԼՈՒ ԶՈԽԻԴԺԱՆԻ (ԶՈԽԻՋԱՆ, SHAKIRZHAN UULU ZOKHIDZHAN) վերաբերյալ փաստաթղթի (Շ.Ու.ԶՈԽԻԴԺԱՆԻՆ (ԶՈԽԻՋԱՆ) Հայաստանի Հանրապետությունից Ղրղզստանի Հանրապետություն տեղափոխելու մասին Ղրղզստանի Հանրապետության գլխավոր դատախազության գրություն) հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հմայակ Ստեփանյանին (ID CARD 000931923, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 10.06.2013թ.) և նրան ծանոթացնել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է

տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ **Հ.Բաղալյան**

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ «21» նոյեմբերի 2018թ.

Հ.Ստեփանյան

1

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

22.11.2018թ. *ք.Երևան*

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Լ.Մանուկյանս, ուսումնասիրելով հետախուզվող ՔԵՄԱԼ (ՔԵՎԻՆ) ՕՔՍՈՒԶԻ (KEMAL / KEVIN OKSUZ) վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունում ստացված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

29.08.2018թ.-ին Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ ԴՊ աշխատակիցների կողմից ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ բերման է ենթարկվել և ձերբակալվել Ամերիկայի Միացյալ Նահանգների (այսուհետ՝ ԱՄՆ) իրավապահ մարմինների կողմից ԱՄՆ քրեական օրենսգրքի 18-րդ գլխի 1001(a)(1), (c)(1), (c)(2) և 2-րդ պարբերությունների և 18-րդ գլխի 1001(a)(2), (c)(1), (c)(2) և 2-րդ պարբերությունների հատկանիշներով հանցագործություններ կատարելու համար միջազգային հետախուզման մեջ գտնվող ՔԵՄԱԼ (ՔԵՎԻՆ) ՕՔՍՈՒԶԸ՝ ծնված 24.06.1969թ.:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատարանի) 31.08.2018թ. որոշմամբ նրա նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում:

18.09.2018թ. ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով ստացվել է Ք. ՕՔՍՈՒԶԻՆ հանձնելու մասին ԱՄՆ իրավասու մարմնի միջնորդությունը՝ կից փաստաթղթերով:

Դատարանի 26.09.2018թ. որոշմամբ նրա նկատմամբ կիրառվել է հանձնելու համար կալանավորում 2 ամիս ժամկետով:

16.11.2018թ. դատարան է ներկայացվել միջնորդություն՝ Ք. ՕՔՍՈՒԶԻ հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին: Նիստը նշանակվել է 23.11.2018թ. ժամը՝ 17:30-ին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Քրեական դատավարությանը մասնակցող անձինք [...] իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: [...]»:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ինչպես նաև այն, որ Ք. ՕՔՍՈՒԶԸ չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ ՄԱՐԻՆԵ ՌՈՒԲԵՆՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական

դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով և 478.4-րդ հոդվածի 2-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Ք. ՕՔՍՈՒԶԻ նկատմամբ հանձնման համար կալանավորման ժամկետը երկարաձգելու միջնորդության քննության ժամանակ հայերեն-անգլերեն և անգլերեն-հայերեն բանավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՄԱՐԻՆԵ ՌՈՒԲԵՆՅԱՆԻՆ (անձնագիր AM սերիայի №0839844, Երևանի Մովսես Խորենացու անվ. Համալսարանի դիպլոմ՝ AB №218153) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության
վարչության պետի տեղակալ *Լ. Մանուկյան*

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների բաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
ՄԱՐԻՆԵ ՌՈՒԲԵՆՅԱՆ *22.11.2018թ.*

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

23.11.2018թ. *ք.Երևան*

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Լ.Մանուկյանս, ուսումնասիրելով հետախուզվող ՔԵՄԱԼ (ՔԵՎԻՆ) ՕՔՍՈՒԶԻ (KEMAL / KEVIN OKSUZ) վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունում ստացված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

29.08.2018թ.-ին՝ Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ ԴՊ աշխատակիցների կողմից ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ բերման է ենթարկվել և ձերբակալվել Ամերիկայի Միացյալ Նահանգների (այսուհետ՝ ԱՄՆ) իրավապահ մարմինների կողմից ԱՄՆ քրեական օրենսգրքի 18-րդ գլխի 1001(a)(1), (c)(1), (c)(2) և 2-րդ պարբերությունների և 18-րդ գլխի 1001(a)(2), (c)(1), (c)(2) և 2-րդ պարբերությունների հատկանիշներով հանցագործություններ կատարելու համար միջազգային հետախուզման մեջ գտնվող ՔԵՄԱԼ (ՔԵՎԻՆ) ՕՔՍՈՒԶԸ՝ ծնված 24.06.1969թ.:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատարանի) 31.08.2018թ. որոշմամբ նրա նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում:

18.09.2018թ. ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով ստացվել է Ք. ՕՔՍՈՒԶԻՆ հանձնելու մասին ԱՄՆ իրավասու մարմնի միջնորդությունը՝ կից փաստաթղթերով:

Դատարանի 26.09.2018թ. որոշմամբ նրա նկատմամբ կիրառվել է հանձնելու համար կալանավորում 2 ամիս ժամկետով:

16.11.2018թ. դատարան է ներկայացվել միջնորդություն՝ Ք. ՕՔՍՈՒԶԻ հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին, որը դատարանի 23.11.2018թ. որոշմամբ բավարարվել է:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է՝ [...] ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով այն, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ինչպես նաև այն, որ Ք. ՕՔՍՈՒԶԸ չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ ԱՐՄԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին,

ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով և 478.4-րդ հոդվածի 2-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Ք. ՕՔՍՈՒԶԻ հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին դատարանի 23.11.2018թ. որոշման անգլերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ԱՐՄԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ (անձնագիր AG սերիայի №0334433, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 23.01.2015թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության
վարչության պետի տեղակալ *Լ. Մանուկյան*

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
ԱՐՄԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ «23»....11..... 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«23» նոյեմբերի 2018թ. ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանս, ուսումնասիրելով ԱԲԴՈՒԼՌԵԶԱ ՍԱԲԵՐԻԻ հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Համաձայն ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված տեղեկության՝ թիվ 83100716 քրեական գործով հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ ԱԲԴՈՒԼՌԵԶԱ ՍԱԲԵՐԻՆ ներկայումս գտնվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում:

ՀՀ գլխավոր դատախազության կոոուպցիոն և տնտեսական գործունեության դեմ հանցագործությունների վարչությունից ստացվել են ԱԲԴՈՒԼՌԵԶԱ ՍԱԲԵՐԻԻ հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ գերմաներեն թարգմանությամբ:

«Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով:

Հիշյալ կոնվենցիային Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության կողմից արված հայտարարության համաձայն՝ հարցումը և կից փաստաթղթերը պետք է ուղեկցվեն գերմաներեն կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով կատարված թարգմանությամբ:

Նկատի ունենալով, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետության հասցեագրված՝ ԱԲԴՈՒԼՌԵԶԱ ՍԱԲԵՐԻԻ հանձնման հարցումը ենթակա է համապատասխանեցման վերոնշյալ կոնվենցիայի պահանջներին, հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջացել այն թարգմանել գերմաներեն, իսկ Սաթենիկ Հայթյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, իսկ այդ պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով, «Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ԱԲԴՈՒԼՌԵԶԱ ՍԱԲԵՐԻԻ հանձնման հարցման գերմաներեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սաթենիկ Հայթյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր ԲԱ 0387407, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ Երևանի պետական համալսարանի Ա N 003927 դիպլոմ) և նրան պարզաբանել ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ *Ա.Հարությունյան*

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների բաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ «23»11 2018թ.

Ս.Հայթյան

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

27.11.2018թ. ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Հ. Գ. Ենոքյանս, ուսումնասիրելով Ռուհոլլահ Ֆախրոլդինի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84103918 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննված թիվ 84103918 քրեական գործն ըստ մեղադրանքի Ռուհոլլահ Խոդադ Ախմադ Ֆախրոլդինիի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 2018 թվականի նոյեմբերի 26-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրական եզրակացությունը ենթակա է հաստատման, իսկ մեղադրյալ Ռուհոլլահ Ֆախրոլդինին չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է պարսկերեն լեզվին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի մեղադրական եզրակացությունը և այն հաստատելու մասին որոշումը մեղադրյալ Ռուհոլլահ Ֆախրոլդինիին հասկանալի լեզվով հանձնելու համար, նշված փաստաթղթերը հայերենից պարսկերեն թարգմանելու համար անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «ՎԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Կրիստինա Խանիկյանին (անձնագիր՝ AG 0494708, տրված՝ 04.06.2005թ. 011-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 07.06.2010թ.):

Կրիստինա Խանիկյանն ունի համապատասխան կրթություն ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ՝

Ռուհոլլահ Ֆախրոլդինի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84103918 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «ՎԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Կրիստինա Խանիկյանին (անձնագիր՝ AG 0494708, տրված՝ 04.06.2005թ. 011-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 07.06.2010թ.):

Կրիստինա Խանիկյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Կրիստինա Խանիկյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ

Հ. Գ. Ենոքյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ ***Կրիստինա Խանիկյան***

«27» 11 2018թ.